ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

17.02.2025 16:35

2025 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատում հյուրընկալվել են Ոստիկանության ակադեմիայի ուսանողները:

Ուսանողներին Պալատում ողջունել և նրանց հետ զրուցել է աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Ապագա իրավաբաններին նաև հնարավորություն է ընձեռնվել այցելել Փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ: Նրանց ներկայացվել է Փաստաբանական ակադեմիա ընդունվելու կարգը, ուսումնական գործընթացը, դասավանդման մեթոդները և այլ կարևոր դրութներ:

Հանրային պաշտպանի գրասենյակում էլ ուսանողներն անմիջականորեն ծանոթացել են ընթացող աշխատանքներին, ինչպես նաև ստացել հանրային պաշտպանների գործառույթների վերաբերյալ իրենց հուզող մի շարք հարցերի պատասխաններ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })